

ԿԱՐԾԻՔ

Ջուլիետա Գագիկի Հարթենյանի

«Կոլեկտիվ ուսուցման սկզբունքների իրականացման հիմնահարցերը («Ֆիզիկա» առարկայի դասավանդման օրինակով)» ատենախոսության մասին՝ ներկայացված ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (Ֆիզիկա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը նվիրված է դասավանդման և դաստիարակության մեթոդիկայի կարևորագույն խնդիրներից մեկին՝ ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացմանը: Որպես դրա լուծման ճանապարհ առաջարկվում է կոլեկտիվ ուսումնական պարապմունքների սկզբունքների իրականացումը՝ հիմնական դպրոցի 7-րդ և 8 –րդ դասարաններում «Ֆիզիկա» առարկայի դասավանդման օրինակով:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և երկու հավելվածներից, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 125 համակարգչային էջ:

Ներածության մեջ ներկայացվում է հետազոտության արդիականությունը, նպատակը, օբյեկտը, առարկան, գիտական վարկածը, հիմնական խնդիրները, հետազոտության մեթոդներն ու գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները: Այստեղ ներկայացված են նաև հետազոտության բազան, արդյունքների փորձաքննությունը, հետազոտության կազմակերպման փուլերը և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Կոլեկտիվ ուսուցման սկզբունքների իրականացման հիմնահարցը դաս-դասարանային համակարգի շրջանակում» գլուխը կազմված է հինգ մասից: Առաջին մասում քննարկվում է ուսուցման սկզբունքների դերն ու նշանակությունը մանկավարժության ոլորտում: Այստեղ ներկայացված են բազմաթիվ մանկավարժների կողմից սահմանված դասական ուսուցման սկզբունքների ձևակերպումներ և դրանց վերաբերյալ 20-րդ դարի երկու խոշորագույն մանկավարժների՝ Վ.Վ.Դավիդովի և Վ.Կ. Դյաչենկոյի վերաբերմունքը: Երկրորդ մասում առանձին-առանձին դիտարկվում են Վ.Կ.Դյաչենկոյի կոլեկտիվ եղանակի ութ սկզբունքները: Երրորդ

մասում քննարկվում են ուսուցման խմբային եղանակից կոլեկտիվ ուսուցման եղանակին անցնելու առաջին, երկրորդ և երրորդ փուլերը, ուսումնասիրվում են խնդիրները, որոնք առաջանում են դաս-դասարանային համակարգի շրջանակում կոլեկտիվ ուսումնական պարապմունքների սկզբունքներն իրականացնելիս: Առանձնացվում են կոլեկտիվ ուսումնական պարապմունքների սկզբունքների իրականացման երկու հիմնահարց. ա) ստեղծել ուսումնական ծրագրի այնպիսի կառուցվածք, որ հնարավոր լինի կազմել թեմաների յուրացման տարբեր երթուղիներ: բ) կազմել աշակերտի կողմից թեմայի ինքնուրույն ուսումնասիրության համար նախատեսվող հատուկ կառուցվածքի քարտային թեմաներ: Չորրորդ մասում քննարկվում է «Ֆիզիկա» առարկայի դասավանդումը ՀՀ հիմնական դպրոցում, իսկ հինգերորդում՝ կոլեկտիվ ուսուցման սկզբունքների իրականացման հիմնահարցերը հիմնական դպրոցի 7-րդ և 8-րդ դասարանների «Ֆիզիկա» առարկայի ուսուցման ընթացքում:

Ատենախոսության երկրորդ՝ «Կոլեկտիվ ուսուցման սկզբունքների իրականացումը «Ֆիզիկա» առարկայի ուսուցման օրինակով» գլուխը կազմված է չորս մասից: Առաջին մասում բերված են 7-րդ և 8-րդ դասարանների «Ֆիզիկա» առարկայի հենքային բովանդակությունը: Երկրորդ մասում ներկայացվում են կոլեկտիվ ուսումնական պարապմունքների իրականացման՝ թեմաների փոխհաղորդման և անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկաները, երրորդում՝ ՈԻԿԵ-ի կայացման երեք փուլերի մոդելները: Չորրորդ գլխում նկարագրվում են անցկացված երկու գիտափորձերի ընթացքն ու արդյունքները: Այստեղ ատենախոսը ներկայացնում է երկու բանաձև՝ սովորողների գործուն ընդգրկվածության գործակիցը գտնելու համար, մեկը՝ ավանդական, մյուսը՝ կոլեկտիվ եղանակներով ուսուցման համար: Բերվում են փորձաքննության արդյունքները, կատարվում է անհրաժեշտ վերլուծություն:

Ներկայացվող ատենախոսությունը ավարտուն, ամբողջական, մեթոդական բարձր մակարդակով արված գիտական հետազոտություն է: Հետազոտության գիտական նորույթներից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում «սովորողների գործուն ընդգրկվածության գործակցի» գաղափարը և հանրակրթական դպրոցի 7-րդ և 8-րդ դասարաններում ֆիզիկայի ուսուցման չորս նոր մոդելները, որոնք կառուցված են կոլեկտիվ ուսուցման սկզբունքների վրա: Ատենախոսությունը ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն:

Անկասկած դրական գնահատելով ներկայացված ատենախոսական հետազոտությունը, այնուամենայնիվ, հարկ եմ համարում նշել որոշ դիտողություններ, որոնք ավելի շատ խորհրդատվական բնույթ ունեն և կարող են հաշվի առնվել թեմայի վրա աշխատանքները շարունակելիս.

1. Հիմնական դպրոցում «Ֆիզիկա» առարկան դասավանդվում է 7-ից 9-րդ դասարաններում, ուստի աշխատանքն ավելի ամբողջական կլիներ, եթե առարկայի ուսուցման գործընթացում կոլեկտիվ ուսուցման սկզբունքների իրականացման հիմնահարցը դիտարկվեր նաև 9-րդ դասարանում:

2. Ատենախոսության մեջ կոլեկտիվ ուսումնական պարապմունքների յոթ ընդհանուր մեթոդիկաներից կիրառվել են միայն երկուսը՝ թեմաների փոխհաղորդման և անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկաները ֆիզիկայի ուսումնական գործընթացի կազմակերպման համար դրանց առավել նպատակահարմարության հիմնավորմամբ: Պարզաբանման կարիք կա, թե ինչն^ով և ու^ոմ կողմից են դրանք հիմնավորված:

3. Ատենախոսության մեջ օգտագործվում է ինչպես քարտային թեմա, այնպես էլ քարտ-թեմա եզրույթը: Պետք է թողնել միայն մեկը, միգուցե նաև դրանք փոխարինել թեմատիկ քարտ եզրույթով:

4. Գործուն ընդգրկվածության գործակիցը խմբային և նոր մոդելով ուսուցման ժամանակ հաշվարկվում են տարբեր բանաձևերով: Որքան^ով է դա ապահովում համապատասխան գործակիցների օբյեկտիվ համեմատությունը:


5. Աշխատանքում նկատվում են նաև որոշ լեզվական վրիպումներ, մասնավորապես էջ 19-ում:

6. Բովանդակության մեջ գրված է «Եզրակացություն», իսկ տեքստում «Եզրակացություններ»:

Նշված թերությունները չեն ազդում աշխատանքի բարձր գնահատականի վրա և չեն իջեցնում կատարված հետազոտության գիտական և գործնական արժեքը: Ատենախոսության տեքստը գրված է լավ գիտական ոճով, պարզ է ու հասկանալի, քերականորեն ճշգրիտ, բոլոր դիրքորոշումները հեղինակի կողմից լավ պատճառաբանված են:

Վերոգրյալը թույլ է տալիս համարել, որ

Ջ.Գ.Հարթենյանի՝ «Կոլեկտիվ ուսուցման սկզբունքների իրականացման հիմնահարցերը («Ֆիզիկա» առարկայի դասավանդման օրինակով)» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետում թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջներին, իսկ ատենախոսը՝ Ջուլիետա Գազիկի Հարթենյանը, արժանի է ԺԳ.00.02 թվանիշով «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղին կից Ա. Հ. Երիցյանի անվան վարժարանի տնօրեն, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու  Ա. Հ. Երիցյան

Ստորագրությունը հաստատում եմ

ՄՊՀ Մասնաճյուղին կից Ա.Հ.Երիցյանի անվան վարժարանի

Փոխտնօրեն  Ա. Հ. Ավետիսյան

«30» մարտի 2021թ

